Հետք թերթի լրագրող

Մարինե Մադաթյանին

Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության վարույթում քննվում է քրեական գործ, որը հարուցվել է 2017թ. նոյեմբերի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «Լիմասոլ Փրոջեքթ Էլ Փի» ընկերության կողմից առանձնապես խոշոր չափի հարկերը պետբյուջե չվճարելու դեպքի առթիվ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, իսկ քրեական գործի քննության սույն փուլում՝ Ձեր կողմից հայցվող տեղեկատվությունը, քննության շահերից ելնելով ենթակա չէ հրապարակման:

ՊԵԿ տեղեկատվության և

հասարակայնության հետ կապերի բաժին